

1922



191

ԱՐ. ԻՍԱԿԱԿԵԱՆ

ԱԲՀԱՅ ՄԱՆՈՒՍԻՒՐ



391.99  
h-75



19 NOV 2011

891.99

հ-75

Ա. ԻՍԱԳԻԿԵԱՆ

ԱՅՐ ԱԼ ՏՈՒՄՈՒՆ



Ա. Խալաֆի:

1922

Հրատարակութիւն  
«ՀԱՅՐԵՆԻՔ» ՏՊԱՐԱՆԻ  
ՊՕՍԹԸՆ

29 APR 2013

32780

5

1085  
Wg 5  
WDS

Ա.ԲՈՒՀ-ԼԱԼԱ ՄԱՀԱՐԻ


ՔԱՍԻԴԻ

Աբու Լալա Մահարին,  
Հոչակաւոր բանաստեղծը Բաղդադի,  
Տասնեակ տարիներ ապրեց Խալիֆաների հոյակապ քաղաքում,  
Ապրեց փառքի եւ վայելքի մէջ.  
Հզօրների եւ մեծատունների հետ սեղան նստեց,  
Գիտունների եւ իմաստունների հետ վէճի մտաւ,  
Միրեց, եւ փորձեց ընկերներին.  
Եղաւ ուրիշ-ուրիշ ազգերի հայրենիքներում.  
Տեսաւ եւ դիտեց մարդկանց եւ օրէնքները:  
Եւ նրա խորաթափանց ողին ճանաչեց մարդուն, ճանաչեց եւ խորագին  
Ատեց մարդուն եւ նրա օրէնքները:

Եւ որովհետեւ չունէր կին եւ երեխաներ՝  
Իր բոլոր հարստութիւնը բաժանեց աղքատներին,  
Առաւ իր ուղտերի քարաւանը՝ պաշարով ու պարէնով,  
Եւ մի գիշեր, երբ Բաղդադը քուն էր մտել Տիգրիսի  
Նոճիածածկ ափերի վրայ,—  
Գաղտնի հեռացաւ քաղաքից . . .



29/10-61



Եւ քարաւանը Արու Լալայի՝ աղբիւրի նման մե՛ղմ կարկաշելով՝  
Քայլում էր հանգիստ, նիրհած գիշերով, հնչուն զանգերի անո՛ւշ դօղանջով:

Հաւասար քայլով չափում էր նամբան այն քարաւանը ոլո՛ր ու մոլո՛ր,  
Եւ դօղանջները ծորում քաղցրալուր՝ ողողում էին դաշտերը անդորր:

Մեղկ փափկութեան մէջ Բաղդադն էր նիրհում ջէննաքի շե՞ղ, վա՛ռ երազներով,  
Գիւլստաններում բլբուն էր երգում գազելներն անուշ՝ սիրոյ արցունիով:

Շատրւանները քրքջում էին պայծառ ծիծաղով աղամանդեղէն,  
Բոյր ու համբոյր էր խնկարկում չորս կողմ Խալիֆաների ֆէօշֆից լուսեղէն:

Գոհար աստղերի քարաւանները թափառում էին երկնի նամբէֆով,  
Եւ դօղանջում էր ողջ երկինքն անհուն՝ աստղերի շե՞ղ, անշէջ դաշնակով:

Մեխակի բոյրով հովն էր շշնջում հէֆեաքներն հազար ու մէկ գիշերւայ,  
Արման ու նոնին անուշ ֆնի մէջ օրօրում էին ճամբէֆի վրայ:

Եւ քարաւանը՝ օրօ՛ր ու շորո՛ր՝ զնգում էր առաջ ու ետ չէր նայում,  
Անյայտ ուղին էր Արու Լալային բիւր երապոյրով կանչում, փայփայում:

—«Գնա՛, միշտ գնա՛, իմ քարաւան, եւ քայլէ՛ մինչեւ օրերիս վերջը,—  
Այսպէս էր խօսում իր սրտի խորքում Արու Մահարին, մեծ քանաստեղծը.

Գնա՛ մենաւոր վայրերը թափո՛ւր, ազա՛տ, կո՛յս եւ սո՛ւրբ զմբուխտեայ հեռուն.  
Դէալի արեւը սլացի՛ր անդուլ, եւ սիրտս այրի՛ր արեւի սրտում:

Ա՛խ, մնաֆ բարեւ չեմ ասում ես ձեզ, իմ հօր գերեզման, օրօ՛ց մայրական,  
Իմ հոգին յաւէրժ խոռվ է ձեզ հետ, հայրենական յարկ, յուշե՛ր մանկական:

Ես շատ սիրեցի իմ ընկերներին, եւ բոլոր մարդկանց՝ մօտիկ ու հեռուն,  
Իծ դարձաւ խայրուն իմ սէրը հիմա, քոյն ատելութեամբ սիրտս է եռում:

Ատում եմ, ինչ որ սիրել եմ առաջ, ինչ որ տեսել եմ մարդկային հոգում,  
Մարդկային հոգում՝ զագիր ու նանիր՝ համբել եմ հազար գարշա՛նի ու նողկո՛ւմ:

Բայց ամէնից շատ ատում եմ հազար ու մէկերորդը — կեղծիքը հոգու,  
Որ գարդարում է անմեղ սրբերի լուսապակով երեսը մարդու:

Մարդկային լեզու, դու որ երկնային քոյրով ու բոյրով, շղարշով պայծառ  
Ծածկում ես մարդու դժոխքը հոգու, հեգե՞լ ես արդեօֆ նշմարիտ մի քառ:

Գնա՛ անապատ, իմ քարաւանս, վայրի, ամայի ափերը բոցոտ,  
Եւ իշեւանիր այն պղնձացած, շէկ ժայռերի տակ, գազանների մօտ:

Խփեմ վրանս, օձ-կարինների բների վրայ վրանս խփեմ,  
Այնտեղ բիւր անգամ ես ապահով եմ, քան թէ մարդկանց մօտ, կե՞ղծ ու ժպտադիմ:

Կամ ընկերի մօ՛տ, ա՛խ, որի կրծքին ես դնում էի գլուխս սիրով,  
Կուրծքը ընկերի, որ շղարշում է անդարձ կորստի անդունդը ստով:

Այնքան ժամանակ, որքան արեւը կ'այրէ Սինայի սնարները վէս,  
Եւ անապատի դեղին շեղչերը յորձանեներ կը տան ալիքների պէս.


Ես չեմ կամենայ ողջունել մարդկանց, նրանց սեղանից պատառ չեմ կտրի.  
Դազանների մօտ հացի կը նստեմ, ողջոյնը կ'առնեմ բորենիների:

Եւ գագանները թո՛ղ ինձ յօշոտեն, բոցոտ հողմերը շաչեն ինձ վրայ,—  
Եւ այսպէ՞ս, մինչեւ օրերիս վերջը, քարաւանս անդա՛րձ, գնա՛ ու գնա՛...».

Եւ վերջին անգամ Աբու Մահարին ետ դարձաւ նայեց նիրհած Բաղդադին,  
Դարշանենով շրջեց նակատը կննուու եւ փարւեց ուղտի թաւ պարանոցին:

Սիրով գուրգուրեց, զերմ շրբունքներով համբուրեց ուղտի աչքերը վճիտ,  
Եւ թարթիչներից նորա կախւեցին անգուստ արցունքի երկու այրող շիք:

Անո՞ւշ մրմունջով, հանգիստ, միաչափ մեղմ օրօրուում էր ձիգ քարաւանը,  
Դնում էր առաջ դէպի անապատ, անյա՛յտ ափերը, կոյս-հեռաստանը...



Եւ ոլորտում էր այն քարաւանը բարձր արմաւների շարքերի միջով,  
Փոշի էր հանում, — փոշու քարաւան, որ վարում էր լուռ՝ քամին հուր շնչով:

— «Քայլէ՛, քարաւան, ի՞նչ ենք մենք թողել, որ կարօտամենով ցանկանք մեր դարձր. — Այսպէս էր խօսում իրեն սրտի հետ Աբու Մահարին, մեծ քանաստեղծը:

Թողել ենք այնտեղ կի՞ն ու բարեկամ, օրէնք, իրաւունք եւ արդարութի՞ւն,  
Քայլէ՛, կանգ մի՛ առ. — Թողել ենք միայն շղթայ ու կապանք, սուտ ու կեղծութիւն:

Եւ կինն ի՞նչ է որ... յաւիտեան նանիր, առնախանձ մի սարդ, խորամանկ, խարող.  
Որ հացդ է սիրում, համբոյրի մէջ սուտ, եւ քո գրկի մէջ ուրիշին գգւող:

Խարխուլ մակոյկով յանձննիր ծովին, կնոջ երդումին քան թէ հաւատա՛,  
Նա՝ կաւատ, վարար, նա՝ չքնաղ դժոխք, իբլիսն է խօսում բերանով նրա:

Դու երազել ես աստղը հեռաւոր, իրեշտակարեւ շուշանն սպիտակ,  
Որ քո վէրքերին բալասան լինի, ոսկէշող երազ կեանքի ցաւի տակ.

Դու տենչացել ես լոյս-ափերի մէջ քեզ իրեն կանչող աղբիւրի երգին,  
Եւ անմահութեան ցօղն ես երազել ու պնուշլացել երկնային կրծքին,

Բայց սէրը կնոյ՝ տոչորւած հոգուդ աղ-ջուր է տալիս, որ միշտ ծարաւնաս,  
Հուր կարօտի մէջ յաղթական կնոջ մարմինը լիզես եւ չը յագենաս:

Ո՛ կնոջ մարմին՝ պագչո՛տ, օձեղին, դիւական անօք ոնիրների չար,  
Դո՛ւ, որ մսեղին դառն հանոյքով արեւը հոգու դարձնում ես խաւար:

Ատում ե՛մ սէրը, մահի պէս անգութ, յաւիտեան այրող, խոցող գաղտնաբար,  
Այդ թունոտ գինին, որով արբողը ստրուկ է դառնում եւ կամ բռնակալ:

Ատում ե՛մ կնոջ, տարբերքը կրքի, միշտ բեղմնաւորող եղեռնը անսանձ,  
Աղբիւրն անսպառ, որ կուտակում է աշխարհի վրայ տիղմը չարութեանց:



Ատում եմ նորից սէրն ու կնոջը, իւր համբոյրները շողոմ ու դժնեայ,—  
Փախչում եմ նրա նահին-մահինից, եւ անիծում եմ երկունքը նրա:

Երկունքը դաժան եւ յաւէրժական, որ հեղեղում է վտառն իժերի,  
Որոնք խայրում են, յօշյօշում իրար, աստղերն են պղծում տոփանեռվ ժահրի:

Սինլքոր է նա, ով հայր է լինում, ով երանաւէտ ծոցից ոչնչի՝  
Զգալու կոչում թշւառ հիւլէին եւ զլխին վառում գէհինն այս կեանքի:

«Իմ հայրը իմ դէմ մեղանչեց, սակայն չ'մեղանչեցի ես ոչ ոքի դէմ»,\*)  
Այս իմ կտակը թո՛ղ գրտի շիրմիս, եթէ լուսնի տակ մի խորշ պիտ' գտնիմ:

Ինչքան ժամանակ, որ ծովը պիտի փարէ Հէջազի ափերն զմրուխտեայ,  
Ես ես չեմ դառնայ կնոջ մօտ երբեք, ես չեմ կարօտնայ թովչանեռին նորա:

Կը գգեմ վայրի տատասկը դժնեայ եւ կը համբուրեմ փշերը նրա,  
Գլուխս կը դնեմ այրուղ ժայռերին եւ կուլամ նրանց ջերմ կրծքի վրայ»:

Եւ քարաւանը մեղմիկ կարկաջով չափում էր ուղին ոլո՛ր ու մոլո՛ր,  
Դէպի երագուն, ոսկեղէն հեռուն հոսում էր առաջ հանգի՛ստ ու անդո՛րը:

Զանգակներն, ասես, հեկեկում էին եւ ծորում հատ-հատ հնչուն արցուներն,  
Քարաւանն, ասես, լալիս էր անուշ, ինչ որ Մահարին սիրել, լին էր:

Եւ գնչիւների սրինգները մեղմ գեղգեղում էին շարքներն անո՛ւշ  
Սիրոյ վէրքերի, վշտոտ կարօտի եւ երազական թախծանին բնիւշ:

Եւ Արու Լալան խորհում էր մոայլ եւ նրա վիշտը անհունի նման,  
Ինչպէս իր ուղին, որ գալարում է, ձգում է անծայր ու չունի վախճան:

Հիւսւելով անծիր նանապարի հետ լուռ թախծում էր նա ցերեկ ու գիշեր,  
Հայեացքը յառած անյայտ աստղերին՝ հոգու մէջ դառն ու ցաւոտ յուշեր:

Եւ ետ չէր նայում անցած նամբէֆին, ո՛չ մի ափսսանք թողած-լքածին,  
Ողջոյն չէր վերցնում, ողջոյն չէր տալիս անցնող ու դարձող քարաւաններին:

\*) Այս խօսքերը գրւած են Բանաստեղծի շիրմի վրայ:

Երրորդ Սուրա

Եւ քարաւանը Արու Լալայի աղբիւրի նման մեղմ կարկաջելով,  
Հանգի՛ստ ու հանդա՛րտ քայլում էր առաջ հեզ կուսնկայի շողերի միջով:

Եւ կուսինն, ինչպէս զէննաքի մատաղ փէրիի կուրծքը՝ չքնաղ, լուսավառ՝  
Մերք ամաչելով պահուում էր ամպում եւ մերք թրբուն փայլում էր պայծառ:

Նիրի էին մտել ծաղկունքը բուրեան՝ ադամանդներով, շեղ-գինդերավ.  
Ծիածանաք-եւ հաւելերը իրար գուրգուրում էին բնիւշ մրմունչով:

Մեխակի բոյրով հովն էր շշնչում հէֆեաքներն հազար ու մէկ գիշերւայ,  
Սրման ու նոնին անուշ բնիւշ մէջ՝ օրօրուում էին նամբէֆի վրայ:

Հովի զրոյցին ունին դնելով Արու-Մահարին խօսում էր անձայն.—  
«Աշխարհն էլ, ասես, մի հէֆեաք լիմի՝ անսկիզր, անվերջ, հրաշք դիւրական.

Եւ ո՞վ է հիւսել հէֆեաքն այս վսեմ, հիւսել աստղերով, թիւր հրաշքներով,  
Եւ ո՞վ է պատմում թիւր-թիւր ձեւերով՝ անդուլ ու անխոնի՝ այսպէս թովչանեռով:

Ազգեր են եկել, ազգեր զնացել, եւ չեն ըմբռնել իմաստը նորա.  
Բանաստեղներն են հասկացել դոյզն ինչ եւ թոքովում են հնչիւններն անմահ:

Ոչ ո՞՛ք չէ լսել սկիզբը նորա, եւ չէ լսելու վախճանը նորա,  
Ամէն հնչիւնը դարեր է ապրում, ամէն հնչիւնին վե՛րջ, սկի՛զբ չ'կայ:

Բայց ամէն մի նոր ծնւածի համար նորից է պատմում հէֆեաքն այս շեղ,  
Նորից սկսում եւ վերջանում է ամէն մի մարդու կեանքի հետ մէկտեղ:

Կեանքը երազ է, աշխարհը՝ հէֆեաք, ազգե՛ր, սերունդնե՛ր— անցնող քարաւան.  
Որ հէֆեաքի մէջ, վառ երազի հետ, չուում է անտես դէպի գերեզման:

Կո՛յր ու գո՛ւլ մարդիկ, առանց երազի, առանց լսելու հէֆեաքն այս վսեմ,  
Իրար կոկորդից պատառ էֆ հանում եւ դարձնում աշխարհն՝ ահաւոր զէհնելմ:



Զեր օրէնքները — լուծ ու խարազան, եւ անելք մի ցանց խօլական սարդի,  
Եւ որոնց ժահրով թունաւորում էք երգը բլբուլի, անուրջը վարդի:

Եղկելի մարդի'կ, փոշի կը դառնան ձեր չար սրտերը, ձեր վատ գործերը,  
Եւ ժամանակի ձեռքը անտարբեր կը սրբէ կ'աւէ ձեր պիլծ հետքերը:

Եւ ունայնաշունչ հողմը կը շաշէ ձեր ոսկորների քարերի վրայ,  
Խսկ վայելելու դուք միշտ ապիկար' երազն այս չենա՛ղ, հեֆեաթն այս ոսկեա՛յ»:

Գոհար աստղերի քարաւանները թափառում էին երկնի նամրէքով,  
Եւ դօղանջում էր ողջ երկինքն անհուն՝ աստղերի շեն՛ղ, անշէ՛ց դաշնակով:

Եւ արար-աշխարհ լցւած էր, դիւրւած նւագումներով յաւերժ, երկնային,  
Անուրջների մէջ նա վերասլաց լսում էր հոգով վսեմ երգերին:

— «Գնա՛, քարաւան, մեղմ հնչիւններդ հիւսելով երկնի լոյս-դօղանջի հետ,  
Վիշտս տու՛ր հովին, քայլէ՛ բնութեան ծոցը մսյրական, եւ մի նայիր ետ:

Տա՛ր ինձ լուսազգեստ օտար մի եզերք, հեռո՛ւ, հեռաւո՛ր, մենաւո՛ր ափե՛ր,  
Սուրբ մենակութիւն, դո՛ւ, իմ ովասի՛ս, դո՛ւ, երազների աղբիւր գովարեր:

Լոութեան երկի՛նք, խօսի՛ր դու ինձ հետ աստղերիդ լեզով, եւ ամոքի՛ր ինձ,  
Գուրգուրի՛ր հոգի՛ս՝ աշխարհից խոցւած, մարդուց խայթւած վիրաւոր հոգիս:

Իմ մէջ այրում է մի անյագ կարօտ, կարեկից մի սիրտ՝ լացող յաւիտեան,  
Եւ իմ հոգում կայ մի շենա երազ, եւ սուրբ արտասուր, եւ սէր անսահման:

Ոգիս ազատ է, ես չեմ հանդուրժում իմ վրայ իշխող ո՛չ մի զօրութեան,  
Ո՛չ օրէնք, սահման, ո՛չ նակատագիր, ո՛չ չար ու բարի, եւ ո՛չ դատաստան:

Իմ գլխի վերեւ չ'պէտք է լինի ո՛չ մի հովանի, ո՛չ մի իրաւունք,  
Եւ իմ կամքից դուրս ամէն ինչ բանու է, եւ սորկացում եւ բռնադատմունք:

Ես կուզեմ լինել անսահման ազա՛տ, անպարտք, անխշան այլեւ անաստւած,  
Հոգիս տենչում է միայն, միմիայն՝ մեծ ազատութեան՝ անհո՛ւն, անտարա՛ծ»:

Եւ քարաւանը հիւսում էր առաջ եւ նորա վերեւ շողում էին վառ  
Մանկան ժպիտով աստղերը ազատ, այն յաւերժափայլ աչքերը գոհար:

Եւ կանչում էին նրան կաքոզին լոյս-թարթումները ոսկի աստղերի,  
Եւ հոգին լցնում վսեմ դաշնակով երկնի հազար բիւրեղ զանգերի:

Վճիտ գիշերին դիւրական ցոլքով փայլում էր ուղին փերուզեայ հեռում,  
Եւ քարաւանը՝ օրօ՛ր ու շորո՛ր, քայլում էր անդորր փերուզեայ հեռուն...



Եւ քարաւանը նեղքելով վստահ մրրկապարը վայրագ ջինների,  
Անշեղ ու անվախ ձգում էր առաջ դօղանջիւններով յուզւած զանգերի:

— «Ի՞նչ է ընկերը . . . հեգում էր անդուլ զայրացած սրտում Աբու Մահարին,  
իմ ազնիւ ծոցում ես օձ սնուցի, թռի՛ր, քարաւ'ն, ընկե՛ր մտերիմ:

Եւ ուր որ կ'երթաս, այնտեղից նորէն գնա՛ ու գնա՛, առանց հանգրւան,  
իմ քարի նամբա՛յ, տա՛ր ինձ, կորցրո՛ւ, չժիխ, տանջանքս մարդիկ չ'իմանան:

Եւ ի՞նչ ենք քողել, ի՞նչ կայ մեր ետեւ, որ մեզ պատրանքով ետ կանչէ նորից,  
Փա՞ռֆ, գա՞նձ, իրաւո՞ւնք եւ իշխանութի՞ւն . . . Թոփ՛ր, հեռացի՛ր բոլոր-բոլորից:

Եւ ի՞նչ է փառքը,— այսօր ֆեզ մարդիկ եղջիւններից վեր կը քարձրացնեն,  
Վաղը նոյն մարդիկ նմլելու համար սմբակների տակ ֆեզ վար կը նետեն:

Ի՞նչ է պատիւը, յարգանքը մարդկանց.— սոսկ ոսկուց-վախից յարգ էն մատուցում,  
Խսկ երբ սայրեցիր, մուճակիդ փոշին մեծ մարդ է դառնում եւ ֆեզ հարւածում:

Եւ ի՞նչ է գանձը, որով յիմարը տիրում է մարդկանց, ե՛ւ հանճար, ե՛ւ սէր,—  
Բիւրաւորների քամւած արիւնը, մեռելների միս, որքի արցունիքներ:

Եւ արհամարհում եմ ամբոխին ռամիկ, մեծ յիմարն է նա, եւ տարրը չարի,  
Ոգին հալածող, բոնութեան խարիսխ, տխմարութեան մէջ գազան վիթխարի:

Ի՞նչ է համայնքը — թշնամու քանակ, եւ անհատն այնուղ անշղթայ գերի,  
Ե՞րբ է նանդուրժել հոգուդ թռիչքին եւ սլացումին նա վեհ մտքերի:

Նողկալի համայնք, հեղանցիչ օդա՛կ, քո լաւն ու վասր — ահեղ խարազան,  
Մի անհուն մկրատ բոլորին խուզող՝ միահաւասար եւ միանման:

Ի՞նչ է օրէնքը, մարդկանցից օրինած, թիրտ ուժեղների այդ սուրը դաժան,  
Անզօրի գլխին կախւած յաւխեան, խեղնին խողխողող, հզօրին պաշտպան:

Եօթն անգամ եօթը ատում եմ, ատում իշխանութիւնը — սերունդներ լափող,  
Անյագ վաշխառ'ն, անկուշտ ձրիակեր, պատերազմների յաւերժ յերիւրող:





Անցած դարերի, գալիք դարերի մեծ դահինն է նա եւ մեծն աւազակ,  
իր անցած ուղին — ոնիր ու նախնիր, սարսափներ վիժող, ոխակալ վոհմակ.

Նա հրեշի պէս կրծքիս է նստել, բռունցքն է ահեղ սեղմել նակատիս,  
եւ ամէն քայլիս շղթայ է զարկել, փական է դրել լեզւիս ու մտիս:

Նա փշրում է միշտ մեր ուսերը վար, ամէնուր հասնում, նզմում է մարդուն,  
եւ հայրենիքի անպարտ անունով բիւր կառափներից բուրգեր է կերտում:

Եւ ամէն ինչ է իշխանութիւնը — իրաւունք, օրէնք եւ արդարութիւն,  
Նա ինքն է խիղճը եւ չարն ու բարին, իսկ ու գերեզման, դու՝ ոչնչութիւն:

Եւ նզովում եմ իշխանութիւնը՝ հազարանիրան մոլի բորենին.

Նրա ամէն քայլը — արիւնի հնձան, ուր տրորում է ծերին, մանուկին:

Ապիկար մարդիկ, ստրուկ ու վախկոտ, ո՞վ տւեց սուրը նմանիդ ձեռքին,  
Ո՞վ տւեց նրան վրէժի իրաւունք՝ իշխել, խողխողել իր նմաններին:

Տա՛ր ինձ, քարաւան, իժերին յանձնի՛ր, քաղի՛ր հէզ սիրտս աւազների տակ,  
Տա՛ր ինձ, ազատի՛ր իշխանութիւնից, ազատի՛ր նորա հովանուց վայրագ»:

Խոլ կայծակները իրեղին քափով ծւատում էին վաշտերն ամպերի,  
Եւ արշաւասոյր՝ փշրում էին ներմակ քաշերին հեռու լեռների:

Եւ մբրիկները մռնչում էին. արման ու նոնին շաշում-շառաշում,  
Եւ քարաւանը արա՛գ, սրբնթա՛ց, եւ քառատրոփ վագում էր քոչում.

Վազում էր քոչում, զրբնգ հա՛ զրբնգ, փոշու ամպերով ծածկելով նամբէն,  
Ասես, փախչում էր չար իշխանութեան ֆինոտ բռունցքից, որ չհասնի իրէն:



Եւ միջօրէի բարկ արեւի տակ խիստ բուրում էին նարգիս ու ծոքոր,  
Եւ քարաւանը՝ փոշու մէջ կորած՝ քայլում էր դանդաղ, յոզնած, քրտնաքոր:

— «Թոփ'ր, քարաւան, խորշակ ու մրրիկ նեղքելով մտի՛ր աւազի ծոցը,  
Այսպէս էր խօսում զայրացած սրտում Արու Մահարին, մեծ քանաստեղծը:

Թոփ'ռ անապատի բոց հողմն իմ դէմ գայ, աւազի վրայից հետքերս ջնչէ,  
Ուր մարդը երբեք տեղս չգտնի, իմ շնչած օդը մարդը չը շնչէ:

Տեսնում եմ ահա շէկ առիւծներին՝ դեղին շեղչերից աչքիս են նայում,  
Տեսնում եմ նրանց, որոնց ոսկեղէն քաշերից հողմը կայծեր է պոկում:

Արփ'ք, կանչում եմ, ես փախչողը չեմ, արփ'ք, լափեցէք սիրտս վիրաւոր,  
Ես ետ չեմ դառնայ մարդու մօտ երբեք, դուռը չեմ բախի մարդու նենգաւոր:

Մարդիկ ի՞նչ են որ... դիմակւած դեւեր, ժանիքներ ունին, անտես նիրաններ,  
Սմբակներ ունին եւ որոնող են եւ նրանց լեզուն — քունաւոր սուսեր:

Եւ ո՞վ են մարդիկ... պազշոտ, եսամո՛լ, մատնի՛չ, ուրացող, աղւեսների հօտ,  
Արիւններ լակող, դահին, դահնապետ, գազան մանկամորք, գազան մանկամորք:


Աղքատութեան մէջ՝ քծնող, վաճառող՝ քշւառութեան մէջ՝ վախկոտ, փոքրոգի,  
Հարստութեան մէջ՝ անգութ, վրիժառու, եւ ամբարտաւան, չարախինդ, լկտի:

Զոհւում է լաւը վատերի համար, եւ վատն ու չարը լլկում են, տանջում  
Մի բուռ լաւերին այս վատ աշխարհում, եւ կեանքի արտում որուն է անում:

Նզովում եմ ձեզ, հեռաւո՞ր մարդիկ, ձեր չարն ու բարին, կրօնները ձեր,  
Որոնք միմիայն շղթայ են կոռում եւ ստրկութեան կոփում զնդաններ:

Ապիրատ աշխա՛րհ, ուր հզօր ոսկին դարձնում է գողին՝ ազնիւ ու շիտակ,  
Ապուշին՝ հանճար, վախկոտին՝ կտրին, յայտնի պոռնիկին — ամբիծ հրեշտակ:

Մարդկային աշխա՛րհ, արեան քաղանի՛ք, ուր քոյլն՝ յանցաւոր եւ հզօրն՝ արդար,  
Ուր մարդը տխեղծ՝ ինչ որ անում է այս գարշ աշխարհում՝ սոսկ նիւթի համար:



Սոսկ շահի համար, նրան միշտ գերի, աստւածացնող քարը եղեռնի,  
Ահա մարդը միշտ — պատկերն Աստծու, սակայն իրապէս վիժւածք շէյթանի:

Համբելով մէկ-մէկ անքիւ քայլերը իմ քարաւանի, իմ անձայր նամբու,  
Անքիւ քայլերը չեն հասնում չափին մի օրում գործած յանցանքին մարդու:

Ասում եմ ահա՝ եւ արեւելքին, հիւսիս, հարաւին եւ արեւմուտքին,  
Որոնց հողմերը իրար հետ ներհակ՝ լսում են մէկսեղ իմ արդար խօսքին:

Տարե՞ք, տարփողե՞ք խօսք իրեղին, որ ծովերից ծով աշխարհներ լսեն,  
Թէ՛ աւելի վատ, աւելի զազիր քան մադը դաժան, — այդ մարդն է նորէն:

Այնքան ժամանակ, որքան աստղերը անշէջ քարքում են լուռ անապատին,  
Եւ գալարում են շեղերն աւազի, շշում ու նչում նման օձերին —

Փախի՛ր, քարաւան, այդ պոռնկութեան լպիրշ ու արբշիր ցոփ խննոյքներից,  
Ստի ու կեղծի իրապարակներից եւ վանառանքի պիղծ շուկաներից:

Համայնքից փախի՛ր, մարդկանց արիւնոտ արդարութիւնից, փախի՛ր վրէժից,  
Փախի՛ր ընկերից, կնոջից, սիրուց, փախի՛ր, կանգ մի՛ առ մարդկանց ստւերից:

Գնա՛, քարաւա՛ն, ներքաններիդ տակ տրորի՛ր, կոխի՛ր օրէնք, իրաւո՛ւնք,  
Եւ նանապարհիդ փոշիով ծածկիր քէ՛ չարն ու բարին, քէ՛ իշխանութիւն:

Եւ քո՛ղ յօշուեն ինձ վագր ու առիւծ, օձուտ հողմերը շաշեն ինձ վրայ, —  
Եւ այսպէս, մինչեւ օրերիս վերջը, քարաւանս անդա՛րձ, գնա՛ ու գնա՛...»

Իրենց աղեղի պարանոցները՝ ուղսերը լարած նետերի նման,  
Զիլ վազում էին, եւ իրենց ետքից քողնելով փոշու քիպու քարաւան.

Զիլ վազում էին խանձւած դաշտերով դէպի անապատ, դէպի հեռաստան,  
Մօղում էին եռդի ամպերով անծիր դաշտերը, աւան ու ոստան:

Կարծես՝ վախեցած վախչում էր արագ՝ առանց համգրւան Աբու Մահարին,  
Կարծես՝ օրէնքը, կինն ու համայնքը նրան կրընկ-կոյս հետեւում էին:

Եւ քարաւանը զրբ՛նգ հա՛ զրբ՛նգ առանց նայելու անցնում էր անդարձ  
Բուրգերի տակով մեծ քաղաքների՝ հացի ու կրքի ժխորով լցւած:

Վազում էր հապնեա՛ անգիսութեան մէջ դարեր քարացած գիւղերի մօտով,  
Վազում էր անդուլ դէպի անապատ ոսկեհոս աստղի անգուսապ կարօսով:

Քարաւանն հեստոտ օրեր-գիշերներ կտրում էր ուղին ոլոր ու մոլոր,  
Եւ խոռվ հոգով Աբու Մահարին խորհում էր ցասկու՝ նակատը խոլոր:

Խոլ քարաւանը նրա խոհերի բազէների պէս՝ ծեծկւած մրրկով՝  
Սլանում էին՝ խոփ ու ցրիւ՝ մի լոյս-հանգրւան գտնելու հեւեռով:

Եւ լալիս էր նա առանց արցունքի, եւ նրա վիշտը նման անհունի,  
Ինչպէս իր ուղին, որ գալարում է՝ անձայր օձի պէս եւ վախճան չունի:

Եւ ետ չէր նայում անցած նամբէֆին եւ չէր ափսոսում քողած, լքածին,  
Ողջոյն չէր վերցնում, ողջոյն չէր տալիս եկող ու անցնող քարաւաններին...



Եւ քարաւանը Աբու Լալայի Արաքստանի մեծ անապատի  
Դարպասների մօտ ծուեր առաւ յոգնած...

Հորիզոնները կրդեհում էին իրենց ամայի, ազատ ափերում,  
Մութն հաւաքում էր ֆղանցքը քաւշեայ, բոցերով բոսր երկինքն էր ծփում:

Եւ Աբու Լալան նստեց մենաւոր, գլուխը յենած յակինք ժայռերուն,  
Հոգին անդորրած եւ հաշտ ու պայծառ, հայեացքը սուզած դիւթական հեռուն:

— «Ո՞հ, ի՞նչ ազատ եմ, անպարփակ ազատ մի՞քէ կարող է այս մեծ Սահարան  
Պարուել, գրկել իր ծիրերի մէջ ազատութիւնս՝ անհուն, անսահման:

Ո՞չ մի մարդկային աչք ինձ չի տեսնի. չի հասնի ո՞չ մի մարդկային բազուկ,  
Ո՞վ ազատութիւն, դու դրախտային չքնաղ վարդերի լուսեղէն բուրմունք:

Քո պերճ-վարդերով դու պսակի՛ր ինձ, վառի՛ր իմ հոգում ջահերդ հուր-հրան.  
Ո՞վ ազատութիւն, դու դրախտային լոյս-բլուների անմահ Ալ-Կորան:


Չքնաղ առապար, դու միայնութեան ոսկեղէն աշխարհ, ֆեղ հազա՛ր ողջոյն,  
Անարատ Բադի՛, ուր մարդը մարդուն չի լլել բնաւ, օրինեալ լինիս դուն:

Տարածի՛ր անծիր, փոխի՛ր աւազիդ գեղին ծովերը ազգերի վրայ.  
Ծածկի՛ր ողջ մարդկանց, ֆէօշ ու խրնիքներ, գիւղ ու շահաստան, շուկայ ու կլայ:

Վիշապ-հողմիդ հետ ազատութիւնը քո՛ղ գահակալէ աշխարհը համուռ,  
Եւ ոսկեվառէ վսեմ արեւը ազատութիւնը աշխարհասփիւռ»:

Հազար ու հազար հրաշալիքներով եւ հրաբորով հրապոյրներով  
Շէմս-արեւն ելաւ՝ շքեղ, լուսափառ, վարդի, սնդուսի բիւր պարոյրներով:

Եւ վեհ արեւի ջահերի ներքոյ փուեց, ծաւալւց ծիրն անապատի,  
Վառ-վառ հուրիքաց, ինչպէս տիտանեան հսկայ առիւծի ոսկեղէն մորքի:



— «Սալա՛մ ֆեղ, արեւ, շիւքը բիւրաբիւր, դու Աստծուց հզօր, դո՛ւ կեանիք աղբիւր.  
Դո՛ւ, իմ անմահ մայր, մայրական դո՛ւ գիրկ, դու միակ բարի, դու միայն սո՛ւրը,  
սո՛ւրը:

Տիեզերական դու անհուն բաժակ ոսկի արբեցման եւ երանութեան,  
Դո՛ւ հրճւանիքի, հրապոյրների հրեղէն գինու դո՛ւ անհուն ովկիան:

Տիեզերական հազարահանդէս դո՛ւ մեծ խրբախնանք, բարի արեգա՛կ,  
Ահա՛ իմ հոգին — մի ծարաւ բողբոջ, բափիր նրա մէջ գինիդ անապակ:

Քո երջանկութեամբ, քո պայծառութեամբ, քո յաւերժութեամբ հարբեցրո՛ւ ինձ,  
Տուր ինձ անցեալի անզարք մոռացում, լոյս անուրջներում քո բուրումնալից:

Հարբեցրո՛ւ ինձ, հարբեցրո՛ւ ինձ, քո անմահ գինով հարբեցրու ինձ,  
Մոռանամ մարդուն, սուտն ու մոայլը, մոռանամ յաւերժ չարիքն ու բախիծ:

Քո անմահութեամբ, քո վսեմութեամբ հարբեցրու ինձ լոյս հիացքներով,  
Խաւարների դէմ անյաղք ախոյեան, գարունների մայր, ուրախութեան ծո՛վ:

Դո՛ւ միակ բարի, դու միակ իմ սէ՛ր, դու միայն սո՛ւրը, սո՛ւրը, մայրական դո՛ւ գիրկ.  
Դո՛ւ յաւէտ գրո՛տ, համբէ խորտակող, դո՛ւ գերահրաշ, միակ գեղեցիկ:

Ես սիրում եմ ֆեղ, ես սիրում եմ ֆեղ, հրեղէն սիրով կիզի՛ր, խոցի՛ր ինձ,  
Ես ոսկենանան վարսերդ շեղ փոփի՛ր ինձ վրայ, եւ գուրգուրի՛ր ինձ:

Եւ արինոտի՛ր իմ շրբունները համբոյրիդ խայրով քո հրդեհակէզ,  
Երջանկասփիւր քո լոյս գիրկը բաց, ես սիրաբորոնք բոչում եմ դէպ' ֆեղ:

Իմ ազնիւ ուղտե՛ր, ոտքի կանգնեցէ՛ք. — դարաւ Մահարին իր քարաւանին,  
Եւ բօթափեցէ՛ք ձեր սրուններից սորուկ աշխարհի զազրելի փոշին:

Եւ բո՞դ խլանան իմ ականջները՝ աղմուկն աշխարհի չլսեմ յաւէտ,  
Յաւէտ կուրանան աշխարհի համար՝ մարդկանց տեսնելու այլ չնայեմ ետ:

Դէպի արեւը դարե՛ր ու դարե՛ր բոփի՛ր, սլացի՛ր, ազնիւ քարաւան,  
Նրա լուսեղէն, բոցեղէն գրկում, որ արեւանամ եւ յաւերժանամ:

Ո՞հ, իմ մայր-արեւ, քո ոսկեփրփուր ծիրանիդ կ'ուզեմ ուսերիս ձգես,  
Որ ես յաղթական, լոյս-փառքերիդ մէջ սրարբած սուրամ դէպի՛, դէպի՛ ֆեղ:

Դո՛ւ Աստծուց հզօր, դու միա՛կ իմ սէր, դու միա՛կ իմ մայր, մայրական դու գիրկ,  
Դո՛ւ միա՛յն բարի, դո՛ւ միա՛յն սո՛ւրը, սո՛ւրը, դու գերահրաշ միա՛կ գեղեցիկ»...

Վերջին Սուրան

Եւ ուղտերն, իբրեւ ոսկի մակոյկներ, հուր-ալիքները ծով-անապատում  
ձեղիելով արագ սլանում էին դէպի բոցավառ, լուսավառ հեռուն:

Եւ ո՛չ մի սամում հրաշունչ քետով չէր կարող հասնել նրանց արշաւին,  
Նրանց բոփիչներն չէր կարող հասնել սլաքը նետի վայրի Բեդուինին:

Վուհադիներից գով սիւֆն էր բերում վառ քասիդները այրող կարօտի,  
Դայայլում էին կաթն-աղբիւրները երազներն իրենց կուսական սրտի:

Եւ հէֆեաքների լոյս-փերիները մայր-արմաւենու քննուշ սօսիւնով  
Համրոյր ու ողջոյն ուղարկում էին եւ կանչում նրան գաղտնի խոստումով:

Բայց Արու Լալան չէր ուզում լսել սիրոյ ողջոյնին, գողտրիկ սօսաւին,  
Թուչում էր անյագ՝ դէպի արեւը, եւ ինքն էլ պայծառ նման արեւին:

Իսկ սերաբները նոր տեսիլներով բիւր պատրանիների, հրապոյրների՝  
Թուչում էին կախարդւած հոգին ոսկի քեւերով լոյս-անուրջների:

Ուղտերը արձակ պարուսաններով հուժկու, մոլեգին, այնպէս խօլաբար՝  
Սլանում էին, ճախր էին առնում հրեղէն բափով, խենք ու խելագար:

Եւ արեգական վառ ցնցուղի տակ բոցկլտում էին ուղտերը գլաք,  
Եւ բարձրադողանց կայլակում էին զանգակներն ազա՛տ, ցնծո՛ւն, լուսազա՛րդ:

Արու Մահարին արծըւի նման աչքերն անքիք-իր՝ արեւին յառած,  
Թուչում էր աննինջ, հոգին լուսարրած եւ երանութեան ջահերով վառւած:

Նրա ետեւում լոկ անապատն էր փուած հոլանի լոյսերի ծոցում,  
Իսկ գլխի վերեւ արեւն էր նազում շափիւրեայ վարսերն անծայր տարածուն:

Եւ ոսկեփրփուր ծիրանին ուսին Արու Մահարին, մեծ բանաստեղծը  
Թուչում էր անդուլ՝ յաղթական ու վեհ, դէպի արեւը, անմահ արեւը...



ԱՐԱԲԱԿԱՆ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ԲԱՌԵՐ

Գիւլստան = Վարդանոց, Վարդաստան  
Զեննար = Դրախտ  
Գագել = Սիրոյ երգեր  
Քէօժ = Ապարանք  
Շարժի = Արեւելեան եղանակներ, երգեր  
Փէրի = Յաւէրժահարս  
Զէհնէմ = Դժոխոք  
Զինն = Ողի  
Սահարա = Անապատ  
Բադիկ = Անապատ  
Կլայ = Բերդ  
Շեմս = Արեւ  
Սալամ = Ողջոյն  
Շիւժր = Փառք, դոհութիւն  
Սամում = Անապատի տաք հողմ, խորչակ  
Վուհադի = Հովլիս, գետահովլիս, ովասիսի մտքով  
Սերար = Միրաժ, օդերեւոյթ  
Քասիդ = Պօէզի, պօէմ. համարեա միշտ երկար,  
երկտող  
Սուրահ = Ղուրանի գլուխները  
Ալ-Կորան = Ղուրան





ՀՀ Ազգային գրադարան

NL0349073

32.780

891.99  
k-75